1. 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման համակարգերի քննությունների ընթերակաների գրաֆիկի հաստատում և քննական տոմսերի պատրաստում:
2. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրականացվող դասընթացների ԱՈՒՄՓ-ների, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, դասախոսների կողմից սահմանված ստուգման ձևերի քննարկում, հաստատում և վերահաստատում:
3. Google Classroom հարթակում իրականացված աշխատանքների և դրանց արդյունքների քննարկում:

**ԼՍԵՑԻՆ՝** օրակարգի առաջին հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** պրոֆեսոր Ռ.Ջիջյանը, դոցենտներ Ս.Դավթյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Դ.Մոսինյանը և դասախոս Մ.Շահբազյանը, ովքեր 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակում համալսարանի յոթ ֆակուլտետներում բակալավրիատի 1-ին, 2-րդ, 3-րդ և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում իրականացնում են կիսամյակի վերջում ամփոփիչ ստուգմամբ ավարտվող հետևյալ դասընթացները՝ *Մշակութային մարդաբանություն, Փիլիսոփայության ներածություն, Փիլիսոփայություն, Բիոէթիկայի հիմունքներ* և *Պատմության փիլիսոփայություն*: Նրանք նշեցին, որ քննական տոմսերը կազմված են նախորդ տարվա սկզբունքով՝ պահպանելով բուհի կողմից հաստատված ձևաչափը, յուրաքանչյուր քննական տոմս կազմված է երեքական տեսական հարցերից,

որոնց տրվում են 35, 35 և 30 միավորներ համապատասխանաբար: Ռ.Ջիջյանը, Ա.Գևորգյանը, Դ.Մոսինյանը և Մ.Շահբազյանը նշեցին, որ *Փիլիսոփայություն* դասընթացի համար իրենք մշակել են ընդհանրական քննական տոմսեր՝ հիմնված ընդհանրական քննական հարցաշարի վրա, արդյունքում կազմված է 20 տոմս: Հովհ.Հովհաննիսյանը նշեց, որ իր կազմած քննական հարցաշարը որոշ չափով տարբերվում է ամբիոնի դասախոսներից շատերի կողմից ընդունված ընդհանրականից հիմնականում որոշ հարցերի ձևակերպումների տեսանկյունից, ուստի իր կողմից ստեղծված քննական տոմսերն էլ ևս տարբերվում են, սակայն նրանցում պահպանված է ընդհանուր հաստատված սկզբունքը և ձևաչափը:

Ա.Ստեփանյանը, Դ.Մոսինյանը և Ս.Դավթյանը նշեցին, որ *Մշակութային մարդաբանություն, Պատմության փիլիսոփայություն* դասընթացների քննական տոմսերը ևս կազմված են ըստ սահմանված ձևաչափի, տոմսերից յուրաքանչյուրն ընդգրկում եմ 3-ական տեսական հարց:

Ա.Գևորգյանը նշեց, որ *Պատմության և հասարակագիտության* ֆակուլտետի հասարակագիտություն մասնագիտության համար իրականացվող *Փիլիսոփայության ներածություն* դասընթացի քննական տոմսերը կազմված են ըստ պահանջի, իսկ *Փիլիսոփայություն* դասընթացի տոմսերը տարբերվում են ընդհանրականից, քանի որ այս մասնագիտության համար իրականացվող *Փիլիսոփայություն* դասընթացն ավելի ծավալուն է, դասընթացին հատկացված է ավելի մեծ ժամաքանակ, ուստի առարկայական նկարագիրն ու քննական հարցաշարը տարբերվում են:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի *Մշակութային մարդաբանություն, Փիլիսոփայության ներածություն, Փիլիսոփայություն, Բիոէթիկայի հիմունքներ* և *Պատմության փիլիսոփայություն* դասընթացների ամփոփիչ քննությունների տոմսերը:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների շուրջ հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** Հ. Հովհաննիսյանը, Ռ. Ջիջյանը,Ս. Դավթյանը, Ա.Ստեփանյանը, Ա. Գևորգյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Դ.Մոսինյանը, Հ. Քոչարյանը, Մ. Շահբազյանը նշեցին, որ իրենց կողմից դասավանդվող դասընթացների թեմատիկ տրոհումներում կատարել են բոլոր անհրաժեշտ փոփախությունները, շտկումները և թարմացումները, որոնք պայմանավորված էին որոշ առարկաների դեպքում ուսումնական պլաններում ժամաքանակի փոփոխմամբ, գրականության և թեմատիկ բաշխվածության վերանայման և թարմացման անհրաժեշտությամբ, կատարված փոփոխությունները ամբողջությամբ արտացոլված են թեմատիկ տրոհումների վերջնական տարբերակներում, որոնք ներկայացված են հաստատման:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** վերահաստատել 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող ներքոթվարկյալ դասընթացների թեմատիկ տրոհումները.

| № | Առարկա | Կուրս<br>Ֆակ. | Ժամաքան., կրեդիտ | Դասախոս/<br>Սեմինարիստ |
|---|---|---|---|---|
| ԱԲ 1 | | | | |
| 1. | Տրամաբանություն | ՊԻ-4, ԱԲ-1<br>Հասարակագիտություն | 60 ժամ, 2 կրեդիտ,<br>20 դաս., 10 գործն.,<br>30 արտալսարանային | Հովհաննիսյան<br>Հասմիկ |
| 2. | Փիլիսոփայության պատմություն | ՊԻ-4, ԱԲ-1<br>Հասարակագիտություն | 180 ժամ, 6 կրեդիտ,<br>50 դաս., 25 գործն.<br>105<br>արտալսարանային | Շահբազյան<br>Մարինե |
| ԱԲ 2 | | | | |
| 3. | Փիլիսոփայություն | ԱԲ-2, ԲՄ-1<br>Հայոց լ. և գրակ. | 60 ժ, 2 կրեդիտ<br>20-6 | Դասախոս՝<br>Գևորգյան Աշոտ |
| 4. | Փիլիսոփայություն | ԱԲ-2, ՄՖԻ-2<br>Մաթեմ.,Տեխն. և ձեռն., Ինֆորմ., Ֆիզիկա | 60 ժ, 2 կրեդիտ<br>20-6 | Դասախոս՝<br>Ռոբերտ Ջիջյան |
| 5. | Գեղագիտություն | ՊԻ-4, Աբ-2<br>Հասարակագիտություն | 120 ժամ, 4 կրեդիտ,<br>39 դաս, 13 գործն.<br>68 արտալսարանային | Դասախոս՝<br>Մոսինյան Դավիթ |
| 6. | Սոցիալական փիլիսոփայություն | ԿՀՄ-6, ԱԲ-2,<br>Սոցիոլոգիա | 24-8<br>90 ժամ, 3 կրեդիտ, | Դասախոս՝ Աշոտ<br>Գևորգյան |
| 7. | Փիլիսոփայություն | Բ-2, ՀԿ-9<br>Տիֆլոմանկ.,<br>Սուրդոմանկ.,<br>Օլիգոֆրենոմանկ.,<br>Լոգոպ. | 60 ժ, 2 կրեդիտ<br>20-6 | Դասախոս՝<br>Ռոբերտ Ջիջյան |
| 8. | Տրամաբանություն | ԱԲ-2, ՕԼ-10<br>Իսպ. լ. և գրակ., Անգ. լ. և գրակ., Գերմ. լ. և գրակ. | 60 ժ, 2 կրեդիտ<br>20-6 | Դասախոս՝<br>Քոչարյան Հրանտ |
| ԱԲ 3 | | | | |
| 9. | Մշակույթի փիլիսոփայություն | ՊԻ-4, ԱԲ-3<br>Հասարակագիտությու ն | 60 ժ, 2 կրեդիտ,<br>16 դաս, 4 գործն, 40<br>արտալսարանային | Դասախոս՝<br>Ստեփանյան<br>Անդրանիկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10. | Հայ փիլիսոփայության պատմություն | ՊԻ-4, ԱԲ-3 Հաաարակագիտությու ն | 120ժ, 4 կրեդիտ, 2 մուտք,32 դաս.,8 գործն.,80 արտալսարանային | Դասախոս՝ Շահբազյան Մարինե |
| ԱԲ 4 | | | | |
| 11. | Սոցիալական փիլիսոփայություն | ԱԲ-4, ՊՀ-4 Հասարակագիտ. | 120 ժ, 4 կրեդիտ, 2 մուտք, 36 դաս.,12 գործն., 80 արտալսարանային | Դասախոս՝ Օհանյան Քաջիկ |
| 12. | Ընտր/դաս (Կրոնի տեսություն և պատմություն) | ԱԲ-4, ՍԿ-8 Մանկ. և մեթոդ. (տարր. կրթ.) | 60 ժ, 2 կրեդիտ, 20 դաս., 4 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Պետրոսյան Նելլի |
| 13. | Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն) | ԱԲ-4, ՍԿ-8 (տարր. կրթ.) | 60 ժ, 2 կրեդիտ,20 դաս.,4 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Ստեփանյան Անդրանիկ |
| ԱՄ1 | | | | |
| 14. | Ընտր/դաս (18-20-րդ դարերի փիլիսոփայական այլընտրանքները) | ԱՄ1, ԳԿ-5 Մշակութ., Երաժշտ. կրթ., Դեկ. կիրառ. արվեստ, Արվեստի տես., պատմ. և կառ., Կերպարվեստ, | 60 ժ, 2 կրեդիտ, 20 դաս., 4 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Շահբազյան Մարինե |
| 15. | Ընտր/դաս (Գիտական աշխատանքի տեխնոլոգիա) | ԱՄ 1, ԿՀՍ-6 Ընտանիքի հոգեբ., Իրավաբանական հոգեբ., Գործնական հոգեբ., Սոց. և քաղաքական հոգեբ., Անձի հոգեբ.և հոգեբ. խորհրդ., Կլին. հոգեբան. և հոգեթերապիա, Սոցիոլոգիա, Հոգեբանություն, Զինվ. հոգեբ., Սոց. մանկ., Սոց. աշխ., | 60 ժ, 2 կրեդիտ, 20 դաս., 4 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Ջիջյան Ռոբերտ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16. | Ընտր/դաս (18-20-րդ դարերի փիլիսոփայական այլընտրանքները) | ԱՄ 1, Կ-7<br>Թանգ. գործ. և պատմամշ. կառույցների պահպ., Պարարվեստ, Օպերատր., Գեղ. լուսանկ., Գրադ. տեղ.աղբ., Լրագ., Ռեժիսուրա, Պրոդյուսեր. գործ, | 60 ժ, 2 կրեդիտ, 20 դաս., 4 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Շահբազյան Մարինե |
| 17. | Ընտր/դաս (Փաստարկման տեսություն) | ԱՄ 1, ՀԿ-9<br>Տիֆլոմանկ., Սուրդոմանկ., Օլիգոֆրենոմանկ., Լոգոպ., Հատուկ հոգեբ., էրգո, Արտթերապիա, Հատուկ մանկ. | 60 ժ, 2 կրեդիտ, 20 դաս., 4 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Հովհաննիսյան Հովհաննես |
| 18. | Ընտր/դաս (Բնական լեզու հասկացում,արհեստական ինտելեկտ) | ԱՄ 1, ՕԼ-10<br>Ռուս.լ. և գրակ. | 60ժ, 2 կրեդիտ, 20 դաս., 4 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Ջիջյան Ռոբերտ |
| **ԱՄ 2** | | | | |
| 19. | Լեզվի փիլիսոփայություն | ԱՄ 2, ԲՍ - 1<br>Հայոց լ. և գրակ. | 60 ժ, 2 կրեդիտ, 28 արտալսարանային 24 դ - 8 գ | Դասախոս՝ Մոսինյան Դավիթ |
| 20. | Տրամաբանություն | ԱՄ 2, ՄՖԻ-2<br>Մաթեմ., Տեխն. և ձեռն., Բնագիտ., Ինֆորմ., Ֆիզիկա | 60 ժ, 2 կրեդիտ, 18 դաս., 6 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Հովհաննիսյան Հասմիկ<br>Դասախոս՝ Քոչարյան Հրանտ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 21. | Տրամաբանություն | ԱՄ 2, ԿՔԱ-3 Կենսաբան., Քիմիա, Աշխարհագր., Լանդշաֆտային պլանավորում, Շրջակա միջավայրի գիտություններ | 60 ժ, 2 կրեդիտ, 18 դաս., 6 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Հովհաննիսյան Հասմիկ |
| 22. | Կրթության փիլիսոփայություն | ԱՄ 2, Պի-4 Հասարակագիտություն | 60 ժ, 2 կրեդիտ, 28 դաս., 8 գործն., 24 արտալսարանային | Դասախոս՝ Պետրոսյան Նելլի |
| 23. | Հաղորդակցման տեխնոլոգիաներ | ԱՄ 2, Պի-4 Պատմ., Իրավագիտ., Հասարակ ագիտություն | 60 ժ, 2 կրեդիտ, դաս., 6 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Հովհաննիսյան Հովհաննես |
| 24. | Հերմենևտիկա | ԱՄ 2, ԳԿ-5 Մշակույթ., Երաժշտ. կրթ., Դեկ. կիրառ. արվեստ, Արվեստի տես., պատմ. և կառ., Կերպարվեստ | 60 ժ, 2 կրեդիտ, 18 դաս., 6 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Մոսինյան Դավիթ |
| 25. | Տրամաբանություն | ԱՄ 2, ԿՀՍ-6 Սոց. աշխ., Սոց. մանկ., Զինվ. հոգեբ., Հոգեբանություն, Սոցիոլոգիա, Կլին. հոգեբան. և հոգեթերապիա, Անձի հոգեբ.և հոգեբ. խորհրդ., Սոց. և քաղաքական հոգեբ., Գործնական հոգեբ., Իրավաբանական հոգեբ., Ընտանիքի հոգեբ. | 60 ժ, 2 կրեդիտ, 18 դաս., 6 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Հովհաննիսյան Հասմիկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 26. | Տրամաբանություն | ԱՄ-2, Կ-7<br>Թանգ. գործ. և պատմամշ. կառույցների պահպ., Պարարվեստ, Օպերատր., Գեղ. լուսանկ., Գրադ. տեղ.աղբ., Լրագ., Ռեժիսուրա, Պրոդյուսեր. գործ | 60 ժ, 2 կրեդիտ, 18 դաս., 6 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Ջիջյան Ռոբերտ |
| 27. | Տրամաբանություն | ՍԿ-8, ԱՄ-2<br>Մանկ. հոգեբ., Տարր. մանկ. և մեթ., ՆԴ մանկ. և մեթ. | 60 ժ, 2 կրեդիտ, 18 դաս., 6 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Հովհաննիսյան Հասմիկ |
| 28. | Տրամաբանություն | ՀԿ-9, ԱՄ-2<br>Տիֆլոմանկ., Սուրդոմանկ., Օլիգոֆրենոմանկ., Լոգոպ., Հատուկ հոգեբ., էրգո, Արտթերապիա, Հատուկ մանկ. | 60 ժ, 2 կրեդիտ, 18 դաս., 6 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Քոչարյան Հրանտ |
| 29. | Լեզվի փիլիսոփայություն | ՕԼ-10, ԱՄ-2<br>Իսպ. լ. և գրակ., Անգ. լ. և գրակ., Գերմ. լ. և գրակ. | 60 ժ, 2 կրեդիտ, 18 դաս., 6 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Մոսինյան Դավիթ |
| 30. | Լեզվի փիլիսոփայություն | ՕԼ-10, ԱՄ-2<br>Ռուս.լ. և գրակ. | 60 ժ, 2 կրեդիտ, 18 դաս., 6 գործն., 36 արտալսարանային | Դասախոս՝ Մոսինյան Դավիթ |

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Օրակարգի վերջին հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Հ.Հովհաննիսյանը, Ռ.Ջիջյանը, Ս.Դավթյանը, Հովի.Հովհաննիսյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Դ.Մոսինյանը, Հ.Քոչարյանը, Մ.Շահբազյանը:

**ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ՝** Ամբիոնի բոլոր դասախոսները պարտաճանաչ կերպով Google Classroom հարթակում ժամանակին տեղադրել են Առարկայական նկարագրերը՝ համապատասխան թեմատիկ տրոհումներով,

դասախոսությունների սղագրությունները, գնահատվող առաջադրանքները և դրանց գնահատականները (մասնավորապես, այն առարկաների դեպքերում, որոնց առարկայական նկարագրերում ֆիքսված է եղել, որ ընթացիկ ստուգումն իրականացվելու է Google Classroom հարթակում գնահատվող հանձնարարության ձևով), միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերը և, որոշ դեպքերում դրանց գնահատատականները, էլեկտրոնային գրականությունը, առանձին դեպքերում՝ տեսաֆիլմեր և դիդակտիկ այլ նյութեր։

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հանձնարարել Ամբիոնի անդամներին թարմացնել և 2-րդ կիսամյակը սկսվելուց առաջ Google Classroom-ի հարթակում զետեղել 2020-2021 ուս. տարվա դասավանդվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթները։

Ամբիոնի վարիչ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Տ. ԱՐՇԱԿՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Ереван: 10, Тиграна Меца 17
Тел.: 597 065
Эл.почта: ՝ chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Блог: chairoflogicphiloscult.wordpress.com

27.01.2021 թ.

## ՆԻՍՏ ԹԻՎ 6

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Ռոբերտ Ջիջյանը, Քաջիկ Օհանյանը, դոցենտներ Սուսաննա Դավթյանը, Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտներ Հրանտ Քոչարյանը, Մարինե Շահբազյանը, դասախոս Նելլի Պետրոսյանը և ավագ մասնագետ Տաթևիկ Արշակյանը:

**ՕՐԱԿԱՐԳ՝**

1. 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննությունների արդյունքների ամփոփում:
2. 2020-2021 ուս.տարվա դասընթացները առերես կազմակերպելու հարցի շուրջ:
3. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասացուցակների տրամադրման հարցը:
4. Google Classroom հարթակում 2-րդ կիսամյակի դասընթացների էջերի ձևավորման շուրջ:
5. Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ՝** օրակարգի առաջին հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** Ռ.Ջիջյանը, Ս.Դավթյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Դ.Մոսինյանը, Մ.Շահբազյանը, ովքեր ամփոփեցին 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննությունների արդյունքները: Նրանք նշեցին, որ 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակում իրենց կողմից դասավանդվող բոլոր քննական դասընթացների ամփոփիչ քննությունները անց են կացվել սահմանված ժամկետներում ընթերակայի

պարտադիր ներկայությամբ, քննական տոմսերը կազմված են եղել պահանջվող ձևաչափով՝ առցանց եղանակով:

Դասախոսները նշեցին, որ ամփոփիչ քննությունները անցել են առանց արտառոց պատահարների, անբավարար ստացած ուսանողների թիվը նորմայի շրջանակներում է, նրանց հնարավորություն կընձեռնվի վերահանձնել ստուգման ձևը լուծարման երկու փուլերով, եղել են նաև բացակայող, ինչպես նաև վարձավճարի չվճարման պատճառով քննության չթույլատրված ուսանողներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Ընդունել ի գիտություն և էլեկտրոնային ամփոփագրերում ֆիքսել ամփոփիչ ստուգումների արդյունքները և սահմանվելիք ժամկետներում պատշաճ կերպով անցկացնել լուծարումները:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Օրակարգի երկրորդ հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** Ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը, ով ամբիոնի անդամներին տեղեկացրեց, որ ԿԳՄՍ նախարարի գրության համաձայն՝ երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացն անհրաժեշտ է կազմակերպել առկա ուսուցմամբ, իհարկե՝ ըստ անհրաժեշտության ուսումնական պլանով նախատեսված դասախոսության ժամերը կարող են կազմակերպվել նաև առցանց եղանակով: Հասմիկ Հովհաննիսյանը նշեց, որ դասախոսները դասընթացները կազմակերպելու եղանակները պետք է համաձայնեցնեն համապատասխան ֆակուլտետների հետ:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** ընդունել ի գիտություն:

**ԼՍԵՑԻՆ՝** Օրակարգի երրորդ հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** Ամբիոնի վարիչ Հ.Հովհաննիսյանը, ով ամբիոնի անդամներին խնդրեց մինչև փետրվարի 8-ը ամբիոնի էլ. փոստին ուղարկել 2020-2021 ուս. տարվա իրենց դասացուցակները:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** մինչև փետրվարի 8-ը ամբիոնի էլեկտրոնային փոստին ուղարկել երկրորդ կիսամյակի դասընթացները:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Օրակարգի չորրորդ հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** Ամբիոնի մասնագետ Տաթևիկ Արշակյանը, ով նշեց, որ անհրաժեշտ է մինչև փետրվարի 2-ը Google Classroom հարթակում տեղադրել ամբիոնների նիստերում հաստատված առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և ուսումնական նյութերը (դասախոսի կողմից՝ մասամբ շարունակական սկզբունքով, կամ ամբողջությամբ միանգամից, սակայն օգտագործելով դասընթացի կառուցվածքային սկզբունքը)՝ օգտագործելով Тема.Topic տիրույթները:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** մինչև փետրվարի 2-ը Google Classroom հարթակում տեղադրել ամբիոնների նիստերում հաստատված առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և ուսումնական նյութերը:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:



Ամբիոնի վարիչ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Տ. ԱՐՇԱԿՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY**
**AFTER KHACHATUR ABOVYAN**
**DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC**
**NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN**



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Ереван: 10, Тиграна Меца 17
Тел.: 597 065
Эл.почта: ՝ chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Блог: chairoflogicphiloscult.wordpress.com

24.02.2021 թ.

## ՆԻՍՏ ԹԻՎ 7

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Ռոբերտ Ջիջյանը, Քաջիկ Օհանյանը, դոցենտներ Սուսաննա Դավթյանը, Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտներ Հրանտ Քոչարյանը, Մարինե Շահբազյանը, դասախոս Նելլի Պետրոսյանը և ավագ մասնագետ Տաթևիկ Արշակյանը:

**ՕՐԱԿԱՐԳ՝**

1. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրականացվող դասընթացների միջանկյալ ստուգումների թեստերի և գրավոր աշխատանքների տոմսերի հաստատում:
2. 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ քննությունների լուծարումների ընթացքի և արդյունքների քննարկում:
3. Էլեկտրոնային մատյանների լրացման շուրջ:
4. Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ՝** օրակարգի առաջին հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** *Հ.Հովհաննիսյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Դ.Մոսինյանը, Հ.Քոչարյանը, Մ.Շահբազյանը, Ն. Պետրոսյանը* ովքեր ներկայացրին 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրենց կողմից իրականացվող դասընթանցերի միջանկյալ ստուգումների թեստերը և գրավոր աշխատանքների տոմսերը, որոնք հիմնականում կազմված են նախորդ տարվա օրինակով և սկզբունքով՝ պահպանելով համապատասխան

միջանկյալների հարցաշարերի բովանդակությունը, թեստերին և գրավոր աշխատանքների տոմսերին ներկայացվող տեխնիկական պահանջները: Դասախոսները նշեցինք, որ թեստերը և առաջադրանքները կազմավել են նաև առցանց հարթակում միջանկյալի իրականացման առանձահատկությունները հաշվի առնելով:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրականացվող դասընթացների միջանկյալ ստուգումների թեստերը և գրավոր աշխատանքների տոմսերը:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Օրակարգի երկրորդ հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** *Ռ.Ջիջյանը, Ս.Դավթյանը, Հովհ.Հովհաննիսյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը, Դ.Մուսինյանը, Հ.Քոչարյանը, Մ.Շահբազյանը,* ովքեր նկատեցին, որ 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ քննությունների լուծարումները հիմնականում ընթացել են բնականոն հունով, սակայն կան չներկայացած կամ կրկին անբավարար ստացած ուսանողներ: Նրանք նաև նշեցին, որ այս կիսամյակում եղել են նաև վերականգնվող ուսանողներ, ում համար նույնպես բնականոն կերպով կազմակերպվել է վերահանձնման գործընթացը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հետևել էլեկտրոնային ամփոփագրերում 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ քննությունների լուծարումների արդյունքների ամրագրման պատշաճ կազմակերպմանն ու իրականացմանը:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

**ԼՍԵՑԻՆ՝** Օրակարգի երրորդ հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** Google Classroom-ի ամբիոնական պատասխանտու Տաթև Արշակյանը, ով նշեց, որ առցանց հարթակում իրականացվող դասընթանցների համար արդեն իսկ ակտիվացվել են էլեկտրոնային մատյանները, որտեղ դասախոսները կարող են իրականացնել ուսանողների հաշվառումը: Նա նաև նշեց, որ համակարգն ատվոմատ յերպով հաշվարկում է անհարգելի, հարգելի և ուշացած համարվող բացակայությունների թվաքանակը, ինչն է՛լ ավելի է հեշտացնում կիսամյակի ավարտին ուսանողների բացակայությունների հաշվման գործընթացը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Աշոտ Գևորգյանը, Հասմիկ Հովհաննիսյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Նելլի Պետրոսյանը, Հրանքը Քոչարյանը, ովքեր նշեցին, որ առցանց դասընթացների դեպքում արդեն իսկ իրականացնում են էլեկտրոնային հաշվառումը, Դ. Մոսինյանը և Ա. Ստեփանյանը նկատեցին, որ իրենց դասերը հիմնականում լսարանային եղանակով են իրականացվում և իրենք նախընտրում են հաշվառումն իրականացնել թղթային մատյանով:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Տ. ԱՐՇԱԿՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN



| | | | |
|---|---|---|---|
| Երևան՝ | 10, Տիգրան Մեծի 17 | Ереван: | 10, Тиграна Меца 17 |
| Հեռ.՝ | 597 065 | Тел.: | 597 065 |
| Էլ.փոստ ՝ | chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am | Эл.почта: ՝ | chairofphilosophy@gmail.com; philos-logic25@aspu.am |
| Բլոգ՝ | chairoflogicphiloscult.wordpress.com | Блог: | chairoflogicphiloscult.wordpress.com |

17.03.2021թ.

## ՆԻՍՏ ԹԻՎ 8

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանը, Քաջիկ Օհանյանը, դոցենտներ Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը և ավագ մասնագետ Տաթևիկ Արշակյանը:

### Օրակարգ

1. Ամբիոնի զարգացման 2021-2025թթ. Ռազմավարական ծրագրի հարցը:
2. *Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և Փիլիսոփայություն* դասընթացների որակավորման քննությունների հարցաշարերի և քննական տոմսերի քննարկման և հաստատման հարցը:
3. Ավարտական աշխատանքների ընթացքը, աշխատանքների ամբիոն հանձման և նախապաշտպանության կազմակերպման գործընթացի հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ՝** Ամբիոնի զարգացման 2021-2025թթ. Ռազմավարական ծրագրի հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, ով նշեց, անհրաժեշտ է Որակի ապահովման բաժին ներկայացնել Ամբիոնի զարգացման 2021-2025թթ.

Ռազմավարական ծրագիրը: Նա նշեց, որ նախապես ներկայացվել էր համալսարանի զարգացման ռազմավարական ծրագիրը, որի հիման վրա էլ անհրաժեշտ է ներկայացնել ամբիոնի զարգացման ծրագիրը: Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագիրը ներառում է 10 ռազմավարական ուղղություններ, որոնցից յուրքանչյուրի համար սահմանվել են նպատակներ: Այդ ուղղություններն են՝

- Ռազմավարական ուղղություն 1՝ կրթական գործունեություն
- Ռազմավարական ուղղություն 2՝ գիտահետազոտական գործունեություն,
- Ռազմավարական ուղղություն 3՝ կառավարման գործընթացներ,
- Ռազմավարական ուղղություն 4՝ դիմորդներ, ուսումնառողներ և շրջանավարտներ,
- Ռազմավարական ուղղություն 5՝ անձնակազմի, մարդկային ռեսուրսների զարգացում,
- Ռազմավարական ուղղություն 6՝ Ֆինանսական գործունեություն, ենթակառուցվածքներ և նյութատեխնիկական բազա,
- Ռազմավարական ուղղություն 7՝ Հասարակության հետ տարվող աշխատանքներ,
- Ռազմավարական ուղղություն 8՝ Միջազգային համագործակցություն,
- Ռազմավարական ուղղություն 9՝ Կրթության որակի ապահովում,
- Ռազմավարական ուղղություն 10՝ Կրթության էլեկտրոնային տեխնոլոգիաներ:

Հասմիկ Հովհաննիսյանը ներկայացրեց ամբիոնի զարգացման ռազմավարական ծրագրի ընդհանուր դրույթները, նպատակները, գործողությունները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Ա. Գևորգյանը, ով նշեց, իր կարծիքով ամբիոնի գործունեությանը համապատասխանում են կրթական գործունեության, գիտահետազոտական գործունեության, միջազգային համագործակցության և կրթության էլեկտրոնային տեխնոլոգիաների ուղղությունները և կազմված ռազմավարական ծրագիրը բխում է ամբիոնի գործունեությունից՝ մեծ ուրախություն հայտնելով առանձնապես *WISDOM* ամսագրի վերաբերյալ ձևակերպված դրույթների շուրջ:

Ն. Պետրոսյանը նշեց, որ շատ կարևոր է, որ ուշադրություն է դարձվել նաև դիմորդներ, ուսումնառողներ և շրջանավարտներ ուղղությանը՝ մատնանշելով «Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» խմբակի շրջանակներում որոշակի միջոցառումների կազմակերպումը:

Ա. Ստեփանյանը նշեց, որ ներկայացված ծրագիրը համապատասխանում է ամբիոնի առանձնահատկություններին և որևէ առարկություններ չունի:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել ամբիոնի 2021-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը և գործողությունների կատարման պլանը:

**ԼՍԵՑԻՆ՝** *Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն* և *Փիլիսոփայություն* դասընթացի որակավորման քննությունների հարցաշարերի և քննական տոմսերի քննարկման և հաստատման հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** Ք. Օհանյանը, ով նշեց,որ այս ուսումնական տարում ասպիրանտուրայի 1-ին և 2-րդ կուրսերում ինքն է դասավանդում *Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն* դասընթացը և նախապես ամբիոնի դիտարկմանն էր ներկայացվել իր կողմից կազմված որակավորման քննության հարցաշարը՝ 60 հարցից բաղկացած: Նա առաջարկեց հաստատել հարցաշարն ու հարցաշարի վրա հիմնված քննական տոմսերը:

Հ. Հովհաննիսյան, ով նշեց, որ *Փիլիսոփայություն* դասընթացի ասպիրանտների և հայցորդների համար նախատեսված որակավորման քննության երկու հարցաշար է կազմված՝ հասարակագետների և բնագետների համար, յուրաքանչյուր հարցաշարը ներառում է 60 հարց, որոնց հիման վրա կազմվել է 20 տոմս՝ բնագետների և հասարակագետների համար առանձին-առանձին, տոմսերից յուրաքանչյուրը ներառում է 3-ական հարց:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել *Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և Փիլիսոփայություն* դասընթացի որակավորման քննությունների հարցաշարն ու քննական տոմսերը:

**ԼՍԵՑԻՆ՝** Ավարտական աշխատանքների ընթացքը, աշխատանքների ամբիոն հանձման և նախապաշտպանության կազմակերպման գործընթացի հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝** Աշոտ Գևորգյանը, Անդրանիկ Ստեփանյանը և Հասմիկ Հովհաննիսյանը: Աշոտ Գևորգյանը նշեց, որ իր ղեկավարությամբ գրող ավարտական աշխատանքն արդեն ավարտական փուլում է և հասարակագիտություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողի՝ Արշակյան Տաթևիկի հետ միասին փորձել են ստանալ ավարտական աշխատանքի բոլոր պահանջներին համապատասխանող աշխատանք: Անդրանիկ Ստեփանյանը նշեց, որ իր ղեկավարությամբ դիպլոմային աշխատանք գրող, հասարակագիտություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Մնացականյան

Հայկի աշխատանքն ընթացքի փուլում է և այժմ միասին կատարում են վերջնական ուղղումները: Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը ներկայացրեց իր ղեկավարությամբ գրվող ավարտական աշխատանքի ընթացքը՝ նշելով, որ ուսանողը՝ հասարակագիտություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Էդուարդ Սարյանը, կատարել է բավական մեծ աշխատանք, նա նշեց, որ միասին աշխատելու արդյունքում՝ աշխատանքը շուտով կմտնի ավարտական փուլ:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝  Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Տ. ԱՐՇԱԿՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY
AFTER KHACHATUR ABOVYAN
DEPARTMENT OF PHILOSOPHY AND LOGIC
NAMED AFTER ACADEMICIAN GEORG BRUTIAN



Երևան՝ 10, Տիգրան Մեծի 17
Հեռ.՝ 597 065
Էլ.փոստ ՝ chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Բլոգ՝ chairoflogicphiloscult.wordpress.com

Ереван: 10, Тиграна Меца 17
Тел.: 597 065
Эл.почта: ՝ chairofphilosophy@gmail.com;
philos-logic25@aspu.am
Блог: chairoflogicphiloscult.wordpress.com

30.04.2021թ.

**ՆԻՍՏ ԹԻՎ 9**

Նիստին մասնակցում էին Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը, դոցենտներ Անդրանիկ Ստեփանյանը, Աշոտ Գևորգյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դավիթ Մոսինյանը, ասիստենտ Հրանտ Քոչարյանը, դասախոսներ Մարինե Շահբազյանը, Նելլի Պետրոսյանը, ավարտական կուրսի ուսանողներ Տաթևիկ Արշակյանը, Հայկ Մնացականյանը և Սարյան Էդուարդը:

**Օրակարգ՝**

1. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը:
2. Ավարտական աշխատանքների համար գրախոսներ նշանակելու հարցը:
3. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի առկա և հեռակա ուսուցման համակարգերի քննությունների ընթերակաների գրաֆիկի հաստատում և քննական տոմսերի պատրաստում:
4. Ընթացիկ հարցեր:

**Լսեցին՝** Օրակարգի առաջին հարցը:

***Ելույթ ունեցավ՝*** *Ավարտական կուրսի ուսանող Տաթևիկ Արշակյանը: Տաթևիկի աշխատանքի թեման էր՝* «Մեդիագրագիտության և դրա դասավանդման անհրաժեշտությունը տեղեկատվական հասարակության ժամանակաշրջանում»:

*Նա տեսաասահիկի միջոցով ներկայացրեց իր աշխատանքը՝ խոսելով աշխատանքի կառուցվածքի, նպատակի, խնդիրների, արդիականության մասին: Նա մանրամասնորեն խոսեք նաև աշխատանքի գլուխների, ամփոփիչ եզրահանգումների մասին:*

***Արտահայտվեց՝*** *Հասմիկ Հովհաննիսյանը, ով խոսեց ընտրված թեմայի արդիականության մասին, ապա հարց տվեց ուսանողին աշխատանքում օգտագործված մեթոդների և նաև որոշ ձևակերպումների շուրջ: Աշխատանքի գիտական ղեկավար Աշոտ Գևորգյանը նշեց, որ ուսանողն ամբողջ ընթացքում աշխատել է՝ օգտվելով նաև օտարալեզու գրականությունից, ապա հավելեց, որ իր գրավոր կարծիքն արդեն պատրաստ է և շուտով կուղարկի ամբիոն:*

***Որոշեցին՝*** *աշխատանքը երաշխավորել պաշտպանության:*

*Որոշումն ընդունվեց միաձայն:*

***Ելույթ ունեցավ՝*** *Ավարտական կուրսի ուսանող Էդուարդ Սարյանը: Էդուարդի աշխատանքի թեման էր՝ «Պատերազմի փիլիսոփայությունը»:*

*Նա տեսաասահիկի միջոցով ներկայացրեց իր աշխատանքը՝ խոսելով աշխատանքի կառուցվածքի, նպատակի, խնդիրների, արդիականության մասին: Նա մանրամասնորեն խոսեք նաև աշխատանքի գլուխների, ամփոփիչ եզրահանգումների մասին:*

***Արտահայտվեց՝***

*Արտահայտվեց դոկտոր Հասմիկ Հովհաննիսյանը, ով նշեց, որ իրականացրել են այն բոլոր փոփոխությունները, որոնք առաջարկվել էին նախապաշտպանության առաջին փուլի ժամանակ և հավելեց, որ կշտկվեն բոլոր տեխնիկական սխալները:*

***Որոշեցին՝*** *աշխատանքը երաշխավորել պաշտպանության*

*Որոշումն ընդունվեց միաձայն:*

***Ելույթ ունեցավ*** *Փ.գ.թ. դոցենտ Անդրանիկ Ստեփանյանը, ով ներկայացրեց իր ղեկավարությամբ ավարտական աշխատանք գրող Հայկ Մնացականյանին, նա նշեց, որ արդեն իսկ պատրաստել է ուսանողի մասին կարծիքը: Նա խոսքը փոխանցեց Հայկ Մնացականյանին: Հայկի աշխատանքի թեման էր՝ «Տոտեմիզմի հոգեվերլուծական-մարդաբանական ըմբռնումը»:*

*Հայկը տեսասահիկի միջոցով ներկայացրեց իր աշխատանքը՝ խոսելով աշխատանքի կառուցվածքի, նպատակի, խնդիրների, արդիականության մասին: Նա մանրամասնորեն խոսեց նաև աշխատանքի գլուխների մասին:*

***Արտահայտվեց՝*** *արտահայտվեց նաև փիլ.գիտ.թեկնածու Անդրանիկ Ստեփանյանը, ով նշեց, որ նախապաշտպանության առաջին փուլում ներկայացված բոլոր խորհուրդները հաշվի են առնվել և աշխատանքում իրականացվել են համապատասխան փոփոխություններ: Նա նշեց, որ աշխատանքի համար օգտագործված գրականության ցանկը շատ հարուստ է և ուսանողն օգտվել է եռալեզու գրականությունից: Անդրանիկ Ստեփանյանը նշեց, որ ավարտական աշխատանքը համապատասխանում է բոլոր պահանջներին:*

***Որոշեցին՝*** *աշխատանքը երաշխավորել պաշտպանության:*

*Որոշումն ընդունվեց միաձայն:*

**Լսեցին՝** Օրակարգի երկրորդ հարցը:

***Ելույթ ունեցավ՝*** *Ա. Ստեփանյանը, ով առաջարկեց գրախոսների նշանակել թեմայի շուրջ գիտական հետաքրքրություն ունեցող մասնագետների:*

**Որոշեցին՝** Ավարտական աշխատանքների գրախոսներ նշանակել հետևյալ անձանց՝

| **Ավարտական աշխատանքի վերնագիր** | **Ուսանողի անուն, ազգանուն, հայրանուն** | **Աշխատանքի ղեկավար** | **Աշխատանքի գրախոս** |
|---|---|---|---|
| Մեդիագրագիտության և դրա դասավանդման անհրաժեշտությունը տեղեկատվական հասարակության ժամանակաշրջանում | Արշակյան Տաթևիկ Մխիթարի | Փիլ.գիտ.թեկ, դոցենտ Աշոտ Գևորգյան | Դասախոս Մարինե Շահբազյան |
| Պատերազմի փիլիսոփայությունը | Սարյան Էդուարդ Արտակի | Փիլ. գիտ. դոկտոր, դոցենտ, Հասմիկ Հովհաննիսյան | Փիլ. գիտ. դոկտոր, դոցենտ, Սուսաննա Դավթյան |
| Տոտեմիզմի հոգեվերլուծական և մարդաբանական ըմբռնումը | Մնացականյան Հայկ Խաչատուրի | Փիլ.գիտ.թեկնածու, դոցենտ Անդրանիկ Ստեփանյան | Փիլ.գիտ.թեկ, դոցենտ Դավիթ Մոսինյան |

Որոշումն ընդունվեց միաձայն:

**Լսեցին՝** Օրակարգի երրորդ հարցը:

***Ելույթ ունեցան՝*** Ռ.Ջիջյանը, Ս. Դավթյանը և Ա.Գևորգյանը նշեցին, որ *Փիլիսոփայություն* դասընթացի համար իրենք մշակել են ընդհանրական քննական տեմսեր՝ հիմնված ընդհանրական քննական հարցաշարի վրա, արդյունքում կազմված է 20 տոմս: Մ. Շահբազյանը և Հ. Հովհաննիսյանը նշեցին,

որ *Փիլիսոփայության պատմություն,* Հայ փիլիսոփայության պատմություն, *Տրամաբանություն* դասընթացների համար ևս կազմվել են քննական հարցաշարի վրա հիմնված 20-ական տոմսեր:

***Որոշեցին***՝ Հաստատել 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի Փիլիսոփայություն, Փիլիսոփայության պատմություն, Տրամաբանություն, Հայ փիլիսոփայության պատմություն

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

Ամբիոնի վարիչ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Տ. ԱՐՇԱԿՅԱՆ